



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manóogian, Primate

Թիւ 28515  
Մարտ 5, 1984

Արժանաշնորհ  
Տ. Արսէն Բհնյ. Պարսամեան  
Հովիւ Ս. Յակոբ Եկեղեցւոյ  
Նախագահ ծխական խորհուրդի  
Ռիչմընտ.

Սիրելի Տէր Արսէն

Ստացած ենք Փետր. 16, 1984 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունվ. 29ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական խորհուրդի երեք անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական խորհուրդի նորընտիր ղիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ .

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Տիգրան Ամիրխանեան  
Տոբթ. Ուիլիլմ Պիքըրդ  
Տէյլ Պարոնեան